Ա.

Հարիւրամեայ տարի է, որ մենք Հայերս էլ ունինք մեր պարբերական մամուլը, որի ներկայացուցիչները աշխատել և գործել են այնչափ, որչափ որ շրջապատող հանգամանքներն ու պարագաները ներել են։ Նրանք զարթեցրել են զանազան խնդիրներ, որոնցից ոմանք՝ այսպէս կամ այնպէս ստացել են իրենց լուծումը, իսկ ոմանք էլ տրուել են մոռացութեան։ Մոռացութեան և անուշադրութեան մատնուած խնդիրներից մինն էլ այն է, որ մենք Հայերս երբէք ծանօթութիւն չունինք մեր երկրի ազգաբնակութեանց տեղադրութեան և զանազան ժողովուրդների վարք ու բարքի, նիստ ու կացի, ազգային ինքնուրոյն առանձնայատկութիւնների և սովորութիւնների հետ։ Մեր երկրի զանազան ազգերի առանձնայատկութիւնների, նրանց լեզուի, կրօնի և ազգային սովորութիւնների մասին մենք միշտ օտար աղբիւրներից ենք տեղեկութիւններ քաղում, որոնք շատ անգամ սխալ և անստոյգ են լինում։ Այն ինչ մեր երկրի բանիմաց, հասկացող և ին-